ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 20 » դեկտեմբեր 2023թ. No 6166 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/4296-23 առ 18.12.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 1 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի

Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված և հավելվածում առկա Ցիտոմեդ դեղի N 19734 գրանցման հավաստագիրը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2023 թվականի դեկտեմբերի « 20 » - ի N 6166 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր)

ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ցիտոմեդ | ցիտիկոլին (ցիտիկոլին նատրիում) | լուծույթ ներքին ընդունման | 100մգ/մլ; 30մլ ապակե շշիկ և չափիչ ներարկիչ, 100մլ ապակե շշիկ և չափիչ ներարկիչ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան 22 | Հայաստանի Հանրապետություն | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան 22 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 21816 (004921) 15.12.2023 |